ԱՐՑԱԽԻ ԳԻՒԼԻՍՏԱՆ ԳԱՒԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐԵԱՆՆԵՐԻ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՃԻՒՂԸ

Արտակ Մաղալեան

Հայոց պատմութիւնը հարուստ է իշխանական բազմաթիւ տոհմերով, որոնցից մելիքական տների ներկայացուցիչները մի քանի հարիւրամեակ շարունակ (17-րդ դարի սկզբից մինչեւ 19-րդ դարի առաջին քառորդը) հանդիսացել են ազգային-ազատագրական պայքարի դրօշակակիրներ: Յատկապէս անուանի են եղել Գիւլիստանի Մելիքբեգլարեանների, Ջրաբերդի Մելիքիսրայէլեանների, Խաչէնի Հասան-Ջալալեանների, Գեղարքունիքի եւ Վարանդայի Մելիք-Շահնազարեանների, Դիզակի Մելիք-Եգանեանների (Մելիք-Աւանեաններ) ու Երեւանի Մելիք-Աղամալեանների տոհմերը: Սոյն յօդուածում համառօտ ներկայացուած են Արցախի Գիւլիստան գաւառի տիրակալ Մելիք-Բեգլարեանների տոհմի Հնդկաստանի ճիւղի ազգաբանութիւնը եւ տոհմածառը:

Գիւլիստանի տիրակալ Մելիք-Բեգլարեանների տոհմից առաջինը Հնդկաստանում բնակութիւն է հաստատել Դաւիթը (1795-1884), որը Մելիք-Ֆրէյդունի (1768-1808) որդին էր: Վերջինիս մելիքութիւնը կարճ է տեւել: Մելիք-Ֆրէյդունի եղբայր Սամը մի վէճի ժամանակ 1808 թ. փետրուարի 6-ին դանակահարել եւ սպանել է նրան: Մելիքի տապանագիրը պատմում է.

«Այս է տապան մելիք Փրիդոնին
Ժառանգ մելիք Բէկլարեանին,
Անպատմելի է մարդոց պտճ զմահին
Քանզի զայսպիսիս սակաւ պատահին:
Ոչ Այ հրամանի եւ ոչ ըստ կամաց
Թողի աշխարհքս քառասուն ամաց
ի 6 փետրուարի 1808 ամի Փրկչին»[1]:

Վաղամեռիկ Մելիք-Ֆրէյդունը թողել է վեց որդի՝ Մելիք-Յովսէփ, Շամիրխան, Դաւիթ, Թալիշ, Թէյմուրազ եւ Բեգլար:

Դաւիթ Մելիք-Բեգլարեանի աւագ եղբայր Մելիք-Յովսէփը եղել է Գիւլիստան գաւառի վերջին տիրակալը: Նա վախճանուել է 1843թ. յունուարի 20-ին եւ թաղուել Հոռեկայ վանքի մօտ գտնուող Մելիք-Բեգլարեանների տոհմական գերեզմանատանը: Մելիք-Յովսէփի տապանաքարը կրում է հետեւեալ արձանագրութիւնը.

«Այս է տապան մելիք Յովսէփին,
Որ է որդի մելիք Փիրդոնին,
Տիրապետողն աշխարհային,
Ղարաբաղու մեծ իշխանին:
Մեծ իշխան էի եւ յոյժ փառաւոր
Ժողովուրդս բազում էր շատ ծառաւոր,
Բազումս գործող եւ աշխատաւոր
Ունայն էր զամէն աշխարհս անցաւոր
Թվին 1843 յունուարի 20 ՌՄՂԲ»[2]:

Դաւթի միւս եղբայրները՝ Շամիրխանը (1790-1850) եւ Թէյմուրազը (1803-1878), ըստ վերոյիշեալ հանգստարանում գտնուող նրանց տապանաքարերի արձանագրութիւնների, եղել են գնդապետներ: Այսպէս.

«Գնդապետ Շամիրխան Փրիդոնեան Մելիք Բեգլարեան ի ցեղէն տիրապետող մելիքաց Գուլիստանի հանգեաւ ի տէր 30-ն օգոստոսի 1850 ամի ի ծն. 60-ամեայ հասակի»,

«Գնդապետ Թէյմուրազ Փրեդօնեան Մելիք Բեգլարեանց յազնուական ցեղէն տիրապետող մելիքաց Գուլիստանի հանգեաւ ի տէր 18 մարտի 1878 ամի ի ծննդենէ 75 ամաց հասակի»[3]:

Այժմ տեսնենք, թէ ինչպէ՞ս է Գիւլիստանի նշանաւոր Մելիք-Ֆրէյդունի որդին եւ Մելիք-Յովսէփի եղբայրը յայտնուել հեռաւոր Հնդկաստանում: «Մելիքները եթէ շատ որդի էին ունենում, երբեմն կրտսերներից մինին ուղարկում էին Էջմիածին կամ Գանձասար՝ կարդալու,- տեղեկացնում է ազգագրագէտ Ե. Լալայեանը,- որ հոգեւորական դառնայ: Այսպէս Մելիք Ֆրիդոնը իւր Դաւիթ որդուն Էջմիածին էր ուղարկել կարդալու, որտեղից նա իւր ուսուցիչ եպիսկոպոսի հետ անցել է Հնդկաստան եւ այնտեղ մնացել»[4]:

Այդ ուսուցիչ եպիսկոպոսի անունը տալիս է նշանաւոր գրող Մ. Թաղիադեանը, որը Հայաստանի գաւառներում շրջելիս 1822 թ. հիւրընկալուել էր Մելիք-Յովսէփի տանը. «Անցաք ընդ Թարթառ գետ ի Դիզա, գիւղ մեծ մէլիք Յովսէփայ մէլիք Փրիդոնեան մէլիք Բեկլարեանց, որոյ մի եղբայրն Շամիր անուն թարգման էր դեսպանութեան Ռուսաց ի Պարս, եւ յետոյ տեղակալ կայսերութեան եւ հազարապետ եղեալ՝ պսակեցաւ պէսպէս կայսերական նշանօք. եւ միւսն՝ Դաւիթ, որ ընդ Վրթանիսի եպիսկոպոսի նուիրակին Էջմիածնի գնացեալ ի Հնդիկս՝ քաղցրութեամբ հագագին ազգի ազգի կատարելութեամբ մտացն, որպէս եւ ազնուութեամբ արեան՝ մեծանուն հանդիսացաւ, եւ ամուսնացեալ ընդ այրուոյ ուրումն հարստի՝ առանձնացեալ բնակեցաւ ի Դաքա»:

«Աստ կացաք զաւուրս երիս,- շարունակում է Մ. Թաղիադեանը,- եւ աստ ուրեմն ծանուցայ արժանապատիւ տիկնոջ Փրիդոնի Բեկլարեանց, որ թէպէտեւ անկարօտ յամենայնի՝ եւ չորեքին ծառացեալ պայծառացեալ որդիք իւր շուրջ զիւրեաւ տակաւին առաջին տիրացու զիս տեսանելով ի տարազ վանականութեան՝ կոչեաց առ ինքն, եւ ընդ առաջին տեսսն՝ «որքա՜ն նման է որդւոյ իմոյ, ա՜հ, Դաւիթ, Դաւի՛թ, որդեա՜կ»,-ասաց, եւ արտասուեաց: Անծանօթ մայրենի խանդաղատանաց նորա՝ եւ որդւոյն իսկ գլխովին, ասացի. «Նանի՛, իմ անուն Դաւիթ չէ, այլ Մեսրովբ՝ Դաւթի՛ որդի»[5]:

Վերոշարադրեալից ակնյայտ է դառնում, որ խօսքը Վրթանէս եպիսկոպոս Աշտարակեցու մասին է: Վերջինս որպէս Էջմիածնի նուիրակ առաջին անգամ Հնդկաստան էր գնացել դեռեւս 1799 թուականին, Յակոբ վարդապետի (այնուհետեւ՝ արքեպիսկոպոս) հետ, Ղուկաս Ա Կարնեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1780-1799) հրամանով: Նրա ուղեկից Յակոբ վարդապետը այդ մասին գրում է. «Յաւուրս գերիշխանական պետութեան տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց, որոյ հրամանաւն գոլով ի Հնդիկս՝ վասն գործոյ նուրիակութեան սրբոյ Աթոռոյն: Յամի փրկութեան մերոյ 1799 եւ թուականիս հայոց ՌՄԽԸ ի բազմամարդ աշխարհն Հնդկաց»[6]:

Հարկ ենք համարում նշել, որ 18-րդ դարի վերջերին Հնդկաստանում Էջմիածնի «նուիրակութեան վիճակները» հետեւեալներն էին. «Նախ ի մայրաքաղաքդ Շահջհանապատ եւ ի դորին բոլոր նահանգսդ, ի Բանկալայ եւ յամենայն գաւառս դորին: Ի Կալկաթայ եւ յամենայն նահանգս դորին: Ի Զիջրա եւ յամենայն նահանգս դորին. ի Դաքայ եւ յամենայն նահանգս դորին. ի Սէյդապատ եւ յամենայն նահանգս դորին. ի Մալդէ, Փալագաթ, ի Մատրաս. եւ յամենայն նահանգս դորին. ի Ֆօրսանդէվի եւ յամենայն նահանգս դորին: Ի Սուրաթ եւ յամենայն նահանգս դորին: Եւ յայլս

© National Library of Armenia

յամենայն տեղիս՝ յորս գոն եւ գտանին Հայկազինք»[7]:

Երբ Էջմիածնի նուիրակները Հնդկաստանի հայկական գաղթօջախներում իրենց հանգանակած նիւթական հարստութեամբ[8] բռնում են տունդարձի ճանապարհը, Բաղդադում նրանց է հասնում կաթողիկոսական գահին տիրանալու համար մղուող «Դաւիթ-Դանիէլեան» հակամարտութեան լուրը: Մայր Աթոռում տիրող իրավիճակը պարզելու նպատակով Վրթանէս Աշտարակեցին ստիպուած է լինում 1805-1808 թթ. երկու անգամ անցնել հայրենիք եւ թարմ տեղեկութիւններով զինուած վերադառնալ, իր հետ վերցնելով նաեւ պատանի Դաւիթ Մելիք-Բեգլարեանին: Յակոբ արքեպիսկոպոսի մահից (1809 թ. հոկտեմբերի 21-ին) յետոյ Վրթանէս Աշտարակեցին գիտնական վարդապետ Սերովբէ Կարնեցու ուղեկցութեամբ նուիրակութեան հաւաքած գումարը 1812 թ. գարնանը հասցնում է Էջմիածին[9], իսկ Դաւիթը Հնդկաստան է մեկնում «1813 թուին որպէս սարկաւագ, Կաթողիկոսական նուիրակ Փիլիպպոս Արքեպիսկոպոսի հետ եւ վերջինիս մահից յետոյ, որ տեղի ունեցաւ Կալկաթայում նոյն 1813 թուի հոկտեմբերի 16-ին, մշտական բնակութիւն էր հաստատել Հնդկաստանում»[10]:

Առհասարակ, «19-րդ դ. սկզբում Հնդկահայ գաղթօջախների քարտէզը նախկինի համեմատ զգալիօրէն փոխուել էր: Նրանցից շատերը կամ վերացել էին, կամ վերացման դռանն էին: Հնդկահայ գաղթօջախներից միայն Կալկաթան եւ Մադրասն էին, որ ոչ միայն չէին նուազել, այլեւ աշխուժացում էին ապրում եւ Հնդկահայ ազգային–մշակութային կեանքը կենտրոնացել էր այդ քաղաքներում»[11]: Դաւիթ Մելիք-Բեգլարեանը ամուսնացել էր Հնդկուհու հետ եւ բնակութիւն հաստատել Հնդկահայոց «մայրաքաղաք» Կալկաթայից ոչ հեռու գտնուող Դաքա քաղաքում: Ժամանակակիցները վկայում են, որ այնտեղ գտնուելու սկզբնական շրջանում նա հանդէս է բերել հասարակական որոշակի ակտիւութիւն: Այսպէս, Մ. Թաղիադեանի կենսագիր Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանը (1831-1909) այդ մասին գրում է. «Մեք հետազօտելով իւր (Մ. Թաղիադեանի - Ա. Մ.) եւ այլոց գրութիւնքն կը ստուգեմք որ Մեսրովբ՝ 1823 թուին իւր քսանամեայ հասակի մէջ գնացել է Կալկաթա քաղաք Հնդկաստանի, ուր հայք ճոխ եւ համբաւեալ վաճառականութեամբ եւ վարժարաններով ու տպարաններով բարգաւաճեալ վիճակ ունէին յայնժամ: Մեսրովբ լսելով որ Ս. Էջմիածնի նուիրակ Նախիջեւանցի Տ. Պօղոս եպիսկոպոս՝ կը գտնուի Դաքա քաղաքում Հնդկաց, որպէս նաեւ Ս. Երուսաղէմի նուիրակ բիւրականցի Տ. Աբրահամ Ծ. Վարդապետն, կը գնայ ինքն եւս անդ, եւ մի ժամանակ կը մնայ նոյն նուիրակների մօտ, որք եւ զբաղեալ էին՝ (հրապուրանօք տփխիսեցի Դաւիթ Ցրիդոն Բէգլարեանցի) դատավարութեամբ, ընդդէմ Աղա Յարութիւն Միքայէլի կնոջ Մարիամ խանումի, որ անվաւեր կը համարէր իւր հանգուցեալ ամուսնոյն կտակագիրն՝ ի նպաստ երկուց Աթոռոց (Էջմիածնի եւ Երուսաղէմի) եւ որ վերջապէս դատավարութիւնը շահելով, երկու կողման դատարանական ծախք կը ծանրանան երկուց նուիրակաց վրայ»[12]:

Հետագայում Դաւիթ Մելիք-Բեգլարեանը Դաքայից ընտանիքով տեղափոխուել է Զիչրա, դասաւանդել Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում: «Նրա անունն երեւում է 1863 թուի Օրացոյցում որպէս «Հայկական վարժապետ», բայց հաւանաբար նախապէս եւս զբաղուել էր ուսուցչութեամբ»[13]: Դաւիթ Մելիք-Բեգլարեանը մահացել է 1884 թ. սեպտեմբերի 22-ին, 89 տարեկանում, Կալկաթայի մօտ գտնուող Զիչրա (Զինսուրա) քաղաքում[14]: Տեղի Ս. Յովհաննէս հայոց եկեղեցու բակում գտնուող հանգստարանում պահպանուած նրա տապանաքարը (նկ. 1) ունի հետեւեալ արձանագրութիւնը.

«Ի քաղցր յիշատակ մեր սիրեցեալ
ճօր. Դաւթի որդւոյ Ցրիդօն Մէլիք
Բէգլարի. որ էր վերջին իշխան Ղարաբաղի
ի Թիֆլիզ ճահանգի. ի Կովկաս. Ծնեալ
ի 1 մէյ (մայիս - Ա.Մ.) 1795 եւ վախճանեալ
ի Զինսուրա ի 22 սեպտեմբերի 1884
«Ես եմ յարութիւն եւ կեանք»[15]:

Դաւթի դուստրը՝ Թագուհի Մելիք-Բեգլարեանը, ինչպէս վկայում է նրա տապանաքարի արձանագրութիւնը (նկ. 4), վախճանուել է 1883 թ. յունուարի 2-ին:

Դաւթի աւագ որդին՝ ճարտարագէտ եւ խմբագիր Յովսէփ Մելիք-Բեգլարեանը (1845-1907), որը կրել է իր նշանաւոր նախնու՝ Գիւլիստան գաւառի տիրակալ Մելիք-Յովսէփի անունը, 1892 թ. Կալկաթայում հիմնադրել է անգլերէն հրատարակուող «Արա» գրական-պատմաքաղաքական հանդէսը[16], որը մի լուսաւոր էջ էր հնդկահայոց անկում ապրող մշակութային կեանքում: «Հայրենասիրական ուղղութիւն ունեցող այս պարբերականի նպատակն էր քաղաքակիրթ մարդկութեան ուշադրութիւնը հրաւիրել հայկական մշակոյթի եւ Հայկական հարցի վրայ»[17], ընդ որում ամսաթերթում տպագրուած յօդուածներից շատերի հեղինակը խմբագիր Յովսէփ Մելիք-Բեգլարեանն էր:

Պէտք է նշել, որ հնդկահայ նշանաւոր գործիչ եւ պատմաբան Մեսրոպ Սէթը (1871-1939) նրա մասին 1892թ. նոյեմբերին Յովհաննէս Մկրեանին ուղղուած նամակում գրում է. «Որդի է սա քաջածանօթն Զեզ՝ Դաւիթ Ցրիդոն Մէլիք Բէգլարեանցի... Կնքեալ է Դաւիթ Բէգլարեան զկեանս իւր ի Հնդիկս, ուր ամուսնացեալ էր եւ ունէր ուստերս եւ դստերս, յորոց քանիք տակաւին կենդանի են եւ քանիք անգեալ ի կենցաղոյս: Այլ գիտել արժան է, զի Դաւիթն այս Ցրիդոն Բէգլարօֆ ամուսնացեալ էր աստ ոչ ընդ հայազգւոյ կամ գէթ քրիստոնէի ուրումն, այլ որ ամօթալին է ընդ հնդիկ կնկի ուրումն, որոյ օրինակին հետեւեալ է եւ որդին, խմբագիրն «Արա» թերթին, Յովսէփ անուն»[18]: Սոյն պարբերականի հրատարակութիւնը, միջոցների բացակայութեան պատճառով, դադարել է 1895 թուականին:

Զիչրայի Ս. Յովհաննէս եկեղեցու ամուսնութիւնների գրանցման արձանագրութիւններից երեւում է, որ Յովսէփ Մելիք-Բեգլարեանը եղել է վերջին հայը, որն ամուսնացել է այնտեղ 1868 թ. օգոստոսի 5-ին[19]: Յովսէփի կինը, որի անունը Մերի (Մարիամ) էր, ինչպէս վկայում է նրա տապանաքարի արձանագրութիւնը (նկ. 3), վախճանուել է 1878 թ. նոյեմբերի 25-ին: Ահա նրա տապանագիրը.

«Ան յիշատակի
Մարիամու
կնոջ
Յովսէփ Դաւիթիչ Մէլիք-Բէգլարովի
25 նոյեմբերի 1878»:

Կնոջ մահից հինգ տարի անց՝ 1883 թ. օգոստոսի 25-ին, մահացել է նաեւ Յովսէփի որդին՝ Շահմիր Մելիք-Բեգլարեանը (նկ. 5):

Իսկ Յովսէփ Մելիք-Բեգլարեանը վախճանուել է 1907թ. ապրիլի 24-ին: Նրա տապանաքարը (նկ. 2) կրում է հետեւեալ արձանագրութիւնը.

«Ի քաղցր յիշատակ Յովսէփ
Դաւիթիչ Մէլիք Բէգլարօֆ

© National Library of Armenia

Ծնեալ ի 25 ջուն (յունիս - Ա.Մ.) 1845
եւ վախճանեալ ի 24 ապրէլ 1907
ի Ջաքդա»:

Գիւլիստանի Մելիք-Բեգլարեանների տոհմի Հնդկաստանի ճիւղի մեզ յայտնի վերջին ներկայացուցիչը Յովսէփի դուստր Վարդենի Մելիք-Բեգլարեանն է, որն իր մահկանացուն կնքել է 1911թ. մարտի 5-ին: Ահա նաեւ նրա տապանագիրը (նկ. 6).

«Ի յիշատակ սիրոյ մօրն իմոյ՝ սիրեցելոյ տիկին
Վարդենի Յովսէփօվնայ Մէլիք-Բեգլար
որ հանգեաւ ի կիւրակէ 5 մարչ 1911
ի Ճակդահա»:

Ահա այսպիսին էր 19-րդ դարի սկզբին Հնդկաստանում հանգրուանած եւ աւելի քան մէկ դար այնտեղ բնակուած Գիւլիստանի Մելիք-Բեգլարեանների տոհմի մի ճիւղի ազգաբանութիւնը: Յօդուածին կցում ենք նաեւ այս ճիւղի տոհմածառը, որը կազմել ենք տոհմածառերի կառուցման միջազգային ստանդարտ նիշերով:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Ե. Լալայեան,** *Երկեր*, հտ. 2, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 254:

2 Նոյն տեղում:

3 **Կ. Ղահրամանեան,** *Նիւթեր Գիւլիստանի մելիքութեան պատմութեան վերաբերեալ*, «Լրաբեր հաս. գիտ.», 1979, թիւ 12, էջ 112:

4 **Ե. Լալայեան,** նշ. աշխ. էջ 250:

5 **Մ. Թաղիադեան,** *Ուղեգրութիւններ, յօդուածներ, նամակներ, վաւերագրեր*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 164-165:

6 **Սերովբէ Կարնեցի,** *Ուղեգրութիւն Բաղդադից Էջմիածին 1812թ.*, Երեւան, 1968, առաջաբանը, էջ 6: Սոյն երկի մասին տէ՛ս նաեւ **Հ. Խաչատրեան, Լ. Խաչերեան,** *Սերովբէ Կարնեցու ուղեգրութիւնը*, «Բանբեր Մատենադարանի», թիւ 8, 1967, էջ 249-260:

7 *Դիւան հայոց պատմութեան*, գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 801:

8 Հնդկաստանի հայկական գաղթօջախներում նրանց հաւաքած հարստութիւնների ցուցակը տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթապանակ 31, վաւ. 227:

9 **Սերովբէ Կարնեցի,** նշ. աշխ., էջ 15:

10 **Ջ. Հանանեան,** *Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը*, Թեհրան, 1971, էջ 28:

11 *Հայ գաղթաշխարհի պատմութիւն*, հտ. 2, Երեւան, «Գիտութիւն» հրատ., 2003, էջ 413:

12 *Դիւան Մեսրոպ Դ. Թաղիադեանի*, խմբագիր Մեսրոպ արք. Աշճեան, Երեւան, 1993, էջ 409: Վերոշարադրեալ տեքստում տփխիսեցին պէտք է հասկանալ կովկասցի իմաստով: Ինչպէս արդէն նշել ենք, Մ. Թաղիադեանը եղել էր Դաւիթ Մելիք-Բեգլարեանի Ղարաբաղի հայրական տանը եւ նրան քաջ յայտնի էր Դաւթի՝ արցախցի լինելը (տե՛ս նաեւ նոյն գրքում տեղ գտած *Մ. Թաղիադեանի օրագրութիւնը*, էջ 14):

13 **Ջ. Հանանեան,** նշ. աշխ., էջ 28:

14 Զիչրա (Զինսուրա) – Հուգլի գետի ափին մի քաղաք, որտեղ հայեր տեղաւորուել էին 1645-ից առաջ եւ 1695 թ. կառուցել Հնդկահայոց առաջին եկեղեցին: Զիչրան տկարացաւ Կալկաթայի պատճառով: 1855 թ. միայն վեց տուն հայեր էին ապրում այնտեղ (տե՛ս *Դիւան Մ. Թաղիադեանի*, էջ 520, նաեւ՝ *Հայք ի Հնդիկս անգղիացւոց եւ հոլանտացւոց*, առանց հրատ. տեղի եւ թուականի, էջ 9-10): «Այլ ցաւալի է, որ ժամանակի փոփոխութիւնք այնտեղի հայ գաղթականութիւնն բնաջինջ են արել, եւ եկեղեցին, որ մի հայ պահապանի խնամոցն է յանձնուած տարին միայն մէկ անգամ կը բացուի Ս. Յովհաննու տօնախմբութիւնն կատարելու համար, եւ այս առթիւ սովորաբար բազմաթիւ հայեր եւ մի քանի քահանայք Կալկաթայէն երկաթուղով կը գան Ս. Պատարագին ներկայ գտնուելու» (տե՛ս **Թ. քահ. Տ. Իսահակեան Ջուղայեցի,** *Արդի վիճակ հնդկահայոց*, «Արարատ», 1896, թիւ Դ, էջ 181, **Թ. Գուշակեան,** *Հնդկահայք*, Երուսաղէմ, 1941, էջ 121-125):

15 Շնորհակալութեամբ նշենք, որ յօդուածին կից բերուող տապանաքարերի լուսանկարները մեզ է տրամադրել Սեպուհ Ալանեանը: Դաւիթ Մելիք-Բեգլարեանի տապանաքարի անգլերէն արձանագրութիւնը տե՛ս **M. Seth,** *Armenians in India*, Calcutta, 1937, p. 178, 309.

16 Ե. Զարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարան (այսուհետեւ՝ ԳԱԹ), Թ. Ազատեանի հաւաքածոյ, նամակ թիւ 10137, էջ 6, հմմտ. **Հ. Աճառեան,** *Հայ գաղթականութեան պատմութիւն*, Երեւան, 2002, էջ 316, որտեղ կարդում ենք. «Տաքքայում 1891 թուից սկսաւ հրատարակուիլ "Ara" անգլերէն ամսաթերթը՝ Մէլիք-Բէկնազարեանի (հաւանաբար վրիպակ է, կարդալ Մէլիք-Բեգլարեանի-Ա.Մ.) խմբագրութեամբ, հայոց համար, որ մի քանի տարի պահպանեց իր գոյութիւնը»: Երեւանի Մատենադարանում պահպանուող սոյն հանդէսի հաւաքածոյի ուսումնասիրութիւնից պարզւում է,

որ ամսաթերթը՝ *"ARA" A Monthly Journal of Literature and of Armenian Politics and History* վերտառութեամբ, 1892 թ. օգոստոսից մինչեւ 1893 թ. օգոստոսը լոյս է տեսել Կալկաթայում, 1893 թ. սեպտեմբերից մինչեւ 1895թ. յունուարը՝ Դաքքայում, իսկ վերջին՝ 1895 թ. փետրուարի համարը կրկին հրատարակուել է Կալկաթայում:

17 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. VI, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 736. Հայ գաղթաշխարհի պատմութիւն, հտ. 2, էջ 421:

18 .ԳԱԹ, Թ. Ազատեանի հաւաքածոյ, նոյն նամակը, էջ 5:

19 **M. Seth,** *Armenians in India*, p. 311, **A. Mirzaian,** *A Short Record of Armenian Churches in India and the Far East*, Calcutta, 1958, p. 49, **A. Basil,** *Armenian Settlements in India*, Calcutta, 1969, p.32.

ԳԻՒԼԻՍՏԱՆԻ ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐԵԱՆՆԵՐԻ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՃԻՒՂԸ



© National Library of Armenia

Հնդկաստանում Մելիք-Բեգլարեանների բնակութեան վայրերը
(Քարտէզը վերցուած է «Դիւան Մ. Թաղիադեանի» գրքից (Երեւան, 1993)



Նկ. 1 Դաւիթ Մելիք-Բեգլարեանների տապանաքարը



Նկ. 2 Յովսէփ Մելիք-Բեգլարեանների տապանաքարը

Նկ.3 Մարիամ Մելիք-Բեգլարեանների տապանաքարը

© National Library of Armenia



Նկ. 4 Թագուհի Մելիք-Բեգլարեանների տապանաքարը

Նկ. 5 Շահմիր Մելիք-Բեգլարեանների տապանաքարը



Նկ. 6 Վարդենի Մելիք-Բեգլարեանների տապանաքարը

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Միսաք Հ. Ճեւահիրճեան

Հայոց վերջին պետութիւնը հիմնուել էր Հայաստանից հեռու, Կիլիկիայի լեռնային տարածքում 1080 թ., «սասնեցի Ռուբէն իշխանի գլխաւորութեամբ: Ռուբէնի հաստատած իշխանութիւնը իր անունով էլ կոչուել էր «Ռուբինեան իշխանութիւն»: Օտարազգիները, յատկապէս եւրոպացիները այն անուանում էին «Լեռների իշխանութիւն»: Մէկ դարից քիչ աւելի ժամանակաընթացքում, հայերը՝ իջան լեռներից եւ գրաւեցին բովանդակ Կիլիկիան ու յարակից տարածութիւնները: 1190 թ-ին Սրբազան Հռոմէական կայսրութեան Ֆրեդերիկ 1-ին Շիկամորուս (1152-1190 թթ.) կայսեր երրորդ խաչակրաց զօրքը, երբ հասել էր Սնովրոս լեռների ստորոտը, Ռումի Սելջուկների աւագանին նրան խորհուրդ էր տուել. «Հայերի մեծ իշխան Լեւոնը, եթէ ուզենայ թողնել, ապա դուք կը կարողանաք անցնել այս կիրճերը եւ շարունակել ձեր ճանապարհը: Հակառակ դէպքում անհնար է անցումը նրա երկրի մէջով»: Ռուբինեան Մեծն Լեւոն II իշխանից, Գրիգոր Դ. Տղա կաթողիկոսից, Ներսէս Լամբրոնացի եպիսկոպոսից, Սելեւկիայի տէր Շահնշահ եւ Միսիսի տէր Հեթում Սասնեցի եղբայր իշխաններից ու այլ պատգամաւորներից բաղկացած պատուիրակութիւնը, Ֆրեդերիկ I Շիկամորուսի հետ բանակցութիւնների ժամանակ, կայսրը եկել էր այն համաձայնութեան, որ Հայոց օժանդակութեան փոխարէն նա Լեւոն II-ին թագադրի «Թագաւորական թագով»: Երկու օր անց, կայսրը Սելեւկիայում խեղդուեց գետում: Նրա հետ եղող որդին՝ Ֆրեդերիկ դը Սուաբն էլ հիւանդանալով մահացաւ Աքքայում, Երուսաղէմի ճանապարհին: Ցրուեց Երրորդ խաչակրաց բանակը եւ անյաջողութեան հանդիպեց արշաւանքը:

1193 թ-ին մահացան Գրիգոր IV Տղայ (1173-1193 թթ.) կաթողիկոսը, Սասնեցի Զորտուանել իշխանի վերոյիշեալ Շահնշահ եւ Հեթում որդիները: Կարծես թէ Լեւոն II-ի թագի նկատմամբ առկայ պահանջարկը մատնուել էր մոռացութեան: Սակայն չէր քնած դիւանագիտութիւնը: Բիւզանդիայի Ալեքս I Անգելոս (1195-1203 թթ.) կայսրը, սրբազան Հռոմէական կայսրին եւ Հռոմի Պապին կանխելու նպատակով, Ռուբինեան Լեւոն II իշխանին ուղարկեց թագաւորական թագ, իր յարակից մանրամասներով միասին: Միջնադարեան եւ արդի գրաւոր աշխատութիւններով, Բիւզանդական թագի ստացման թուականի մասին կան իրար հակասող տեղեկութիւններ: Այդ եղելութեան մասին հետեւեալն է գրել Սմբատ Սպարապետը (1208-1276 թթ.).

«Իսկ ի թուին ՈՄԵ (645=1196 թ.) առաքեաց թագաւորն Յունաց Լեւոնի թագ պատուական, եւ խնդրէ ի նմանէ զմիաբանութիւն սիրոյ. եւ նա առ ընկալաւ ուրախութեամբ»:

Ըստ միջնադարի պատմագիր Կիրակոս Գանձակեցու (ԺԳ. դ.) եւ Յովհան Դարդելի (ԺԴ. դ.) տեղեկութիւնների, բիւզանդական թագը ստացուել էր իբր գերմանականից (Սրբազան Հռոմէական կայսրութիւն) յետոյ: Սակայն դա թիւրիմացութիւն է: Ինչպէս յայտնի է Լեւոն Մեծագործը թագադրուել էր երկու օտար

© National Library of Armenia